

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Հայրենադարձության եւ հիմնավորման «ԵՐԿԻՐ» հասարակական կազմակերպությունների միության կողմից Վարդենիսի շրջանի , Արեգունի գյուղի դպրոցի շինարարական աշխատանքների վերաբերյալ**

Մեր կազմակերպությունը սույն թվականի հունիս ամսից սկսեց իրագործել Արեգունի գյուղի դպրոցի վերականգնման աշխատանքները, որոնք ավարտվել են օգոստոսի 20-ին եւ դպրոցը հանձնվել է շահագործման: Ստորեւ ներկայացնում ենք Ձեզ տեղեկություններ իրականացված աշխատանքների եւ կատարված ծախսերի վերաբերյալ՝

**Տրամադրված գումար**

Շինարարական աշխատանքների գումար	\$ 17 593,00
Ներքին կահավորման գումար	\$ 4 335,00
Ձեռուցման համակարգի գումար	\$ 2 145,00
Վավերագրական ֆիլմի նկարահանման եւ ադմինիստրատիվ ծախսերի համար	\$ 800,00
<b>Ընդամենը տրամադրված դրամական միջոցներ</b>	<b>\$ 24 873,00</b>

**Իրականացված ծախսեր**

N	Կատարված աշխատանքների ուղղությունը	Իրականացված աշխատանքների նկարագրությունը	Գումար
1	Շինարարության համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում	Համաձայն դպրոցի վերականգնման նախահաշվի ձեռք են բերել շինարարական նյութեր	\$ 11 023,00
2	Շինարարական աշխատանքներ	Իրականացվել են շենքի վերականգնման աշխատանքները	\$ 2 200,00
3	Էլեկտրական աշխատանքներ	Իրականացվել են շենքի ներքին եւ արտաքին էլեկտրաֆիկացման աշխատանքները	\$ 450,00
4	Ձեռուցման համակարգի աշխատանքներ	Ձեռք են բերվել եւ տեղադրվել ջեռուցման ապահովման համակարգի անհրաժեշտ պարագաներ	\$ 1 945,00
5	Ներքին հարդարման աշխատանքներ	Իրականացվել են շենքի ներքին հարդարման (պատերի գաջապատման, դռների եւ լուսամտերի տեղադրման, ներկման աշխատանքները	\$ 4 000,00
6	Ներքին կահավորման ծախսեր	Ձեռք է բերվել կահույք դպրոցի համար	\$ 4 335,00
7	Տարածքի բարեկարգում	Իրականացվել են տարածքի շինարարական թափոններից մաքրման եւ կանաչապատման աշխատանքները	\$ 120,00
8	Վավերագրական ֆիլմի նկարահանում		\$ 450,00
9	Բանկային տոկոս		\$ 125,00
10	Կազմակերպչական ծախսեր		\$ 350,00
<b>Ընդամենը</b>			<b>\$ 24 998,00</b>

**Նախահաշվից դուրս իրականացված ծախսեր**

N	Կատարված աշխատանքների ուղղությունը	Իրականացված աշխատանքների նկարագրությունը	Գումար
1	Կառուցվել է տնօրենի սենյակ	Կառուցվել է տնօրենի սենյակ, տեղադրվել է մեկ դուռ եւ երկու պատուհան իրենց ապակիներու	\$ 170,00
2	Այլ ծախսեր	Կառուցվել է շքամուտքի ծածկ	\$ 200,00
3	Ներքին հարդարման աշխատանքներ	Նախահաշվից դուրս իրականացվել են շենքի ներքին պատերի կրկնակի ներկման աշխատանքները	\$ 550,00
<b>Ընդամենը</b>			<b>\$ 920,00</b>

**Նախահաշվով նախատեսված բայց չկատարված աշխատանքներ**

N	Կատարված աշխատանքների ուղղությունը	Իրականացված աշխատանքների նկարագրությունը	Գումար
1	Նախահաշվով նախատեսված էին շենքի ճակատի ներկման աշխատանքներ, սակայն վերջինս չի իրականացվել, քանի որ նախահաշվով նախատեսված ներկը չէր համապատասխանում տեղանքի կլիմայական պայմաններին, անհրաժեշտ էր ձեռք բերել համապատասխան ներկ, որը լրացուցիչ ֆինանսավորման դեպքում հաջորդ տարվա ընթացքում կկատարվի: Անհրաժեշտ գումար՝		\$ 900,00